



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հուլիսի 2026 թվականի N 1026-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 27-Ի N 568-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 568-Ն որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՄԲ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԾԱՎԱԼՆԵՐՆ ՈՒ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների, օժանդակ սերմնավորման կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգը, ծավալներն ու շահառուներին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
մայիսի 27-ի N 568-Ն որոշման

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՄԲ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԾԱՎԱԼՆԵՐՆ
ՈՒ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Անպտուղ գույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ» բյուջետային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում հետազոտությունների և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների, օժանդակ սերմնավորման կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման հետ կապված ծավալները, շահառուներին ներկայացվող պահանջները, ընթացակարգերը և դրանց հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների, օժանդակ սերմնավորման կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման նպատակով շահառուների հաշվառման և հերթագրման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում փոխհատուցվող վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման, հետազոտությունների, բուժման և օժանդակ սերմնավորման ծավալներն են՝

1) անպտղության պատճառագիտության ախտորոշում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշմամբ սահմանված ծավալներով, և բուժում:

2) մինչև օժանդակ սերմնավորումն ու արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշմամբ սահմանված ծավալներով:

3) օժանդակ սերմնավորման կիրառում ամուսնու կամ դոնորական սերմով՝ սերմնավորման փորձեր առավելագույնը 6 դաշտանային ցիկլի ընթացքում:

4) արտամարմնային բեղմնավորման իրականացման մեկ փորձ, հավելյալ սաղմերի ստացման դեպքում 2 կրիոտոպի սառեցում՝ մինչև 6 ամիս պահպանմամբ:

5) ապաստանեցված սաղմերի 2 հավելյալ տեղադրում արգանդի խոռոչ:

3. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրի շրջանակներում փոխհատուցվում են միայն արտամարմնային բեղմնավորման երկրորդ փորձի հետևյալ ծավալները՝

1) մինչ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտությունները (առաջին փորձի ժամանակ կատարված հետազոտությունների վաղեմության ժամկետը լրանալու դեպքում):

2) արտամարմնային բեղմնավորման երկրորդ փորձի ձվարանների ձվազատման խթանման փուլը և «յուտեինային փուլին» աջակցումը կամ ձվաբջիջների արտածծումը, բեղմնավորումը, արգանդի խոռոչ սաղմի տեղափոխումը, սաղմերի սառեցում՝ հավելյալ սաղմերի ստացման դեպքում 2 կրիոտոպի սառեցում՝ մինչև 6 ամիս պահպանմամբ, ինչպես նաև ապաստանեցված սաղմերի 2 հավելյալ տեղադրումը արգանդի խոռոչ: Արտամարմնային բեղմնավորման երկրորդ փորձի սույն ենթակետով սահմանված՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում չփոխհատուցվող փուլերից յուրաքանչյուրի արժեքը շահառուի կողմից վճարվում է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում փոխհատուցվող բժշկական ծառայությունների գներին համարժեք:

4. Այն դեպքում, եթե անձն ունի սառեցված սաղմեր նախորդ արտամարմնային բեղմնավորման փորձից հետո, նա կարող է օգտվել արտամարմնային բեղմնավորման հաջորդ փորձից միայն սառեցված սաղմերի տեղադրման անհաջող փորձերից հետո:

5. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման յուրաքանչյուր դեպքում, բացառապես ըստ բժշկական ցուցումների, կարող է տրամադրվել սույն հավելվածի 2-րդ կետով նախատեսված ծավալների ցանկացած անհրաժեշտ համակցություն (պատճառագիտության հետազոտում և բուժում, հետազոտություններ՝ օժանդակ սերմնավորումից կամ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառումից առաջ, օժանդակ սերմնավորում, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառում):

6. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը, ինչպես նաև օժանդակ սերմնավորումը չեն ներառում փոխնակ մոր, դոնորական ձվաբջջի և դոնորական սերմնաբջիջների համար փոխհատուցման ծախսերը:

7. Այն դեպքում, եթե սույն հավելվածով սահմանված շահառուն ունի դոնորական ձվաբջջի կարիք և տվյալ դեպքի շրջանակներում իր ձվարանների խթանումը չի իրականացվել, բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կարող է իրականացվել ձվաբջջի դոնորի ձվարանների խթանումը և ձվաբջիջների արտածծումը:

8. Սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված դեպքերում ստացված և շահառուի կողմից չօգտագործված դոնորական ձվաբջիջները պահպանվում են բժշկական կազմակերպությունում և կարող են տրամադրվել այլ շահառուի միայն անհատույց, ում կողմից էլ փոխհատուցվում են ձվաբջջի (ձվաբջիջների) պահպանման ծախսերը: Ընդ որում, բժշկական կազմակերպության կողմից վերահսկվում է դոնորից ստացված և շահառուի կողմից չօգտագործված դոնորական ձվաբջիջների հաշվառման, պահպանման, անհատույց տրամադրման և փաստաթղթավորման գործընթացը:

9. Դոնորական ձվաբջջի և (կամ) դոնորական սերմնաբջջի օգտագործմամբ, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում փոխնակ մոր, սեռաբջջի (սեռաբջիջների) դոնորի (դոնորների) ծախսերը փոխհատուցվում են շահառուի կողմից, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-L որոշմամբ սահմանված շահառուների:

10. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում անպտղության պատճառագիտության հետազոտումը և բուժումը, օժանդակ սերմնավորումը, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպությունների կողմից:

2. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

11. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում հետազոտությունների, բուժման, օժանդակ սերմնավորման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվելու իրավունք ունեն՝

1) 2 տարի և ավելի անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման, իսկ 36 տարեկան և ավել տարիքում դիմելու դեպքում՝ առնվազն 1 տարվա անպտղության ախտորոշում)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Ղարաբաղից տեղահանված փախստական անգավակ կանայք, ովքեր պատկանում են 20-40 (ներառյալ) տարիքային խմբին, սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված ծավալներով, ընդ որում՝ 40 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 42 տարեկան դառնալը.

2) 28-42 (ներառյալ) տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Ղարաբաղից տեղահանված փախստական անգավակ կանայք՝ սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված ծավալներով.

3) մեկ երեխա ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Ղարաբաղից տեղահանված փախստական՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ամուսնությունը գրանցած (ճանաչված), 2 տարի և ավելի երկրորդային անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման, իսկ կնոջ 36 տարեկանում դիմելու դեպքում՝ առնվազն 1 տարվա անպտղություն ունեցող) զույգերը, որոնցից կինը պատկանում է 20-36 (ներառյալ)

տարիքային խմբին՝ սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված ծավալներով, ընդ որում՝ կնոջ 36 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 39 տարեկան դառնալը:

4) զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայության ավարտից հետո զինվորական ծառայության հետ կապված պատճառական կապով գոհված (մահացած) որդու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ Ղարաբաղից տեղահանված փախստական ծնողները՝ սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված ծավալներով, ընդ որում՝ կնոջ տարիքը սահմանվում է մինչև 42 տարեկանը, իսկ 41 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մինչև 44 տարեկան դառնալը:

12. Սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված բժշկական օգնության և սպասարկման ծավալներից կարող են օգտվել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով կամ ծառայողական պարտականությունները կատարելիս գոհված (մահացած), կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված, ինչպես նաև սույն կետում նշված հանգամանքներում ստացած վնասվածքի, խեղման կամ ձեռք բերած հիվանդության հետ պատճառական կապով հետագայում մահացած զավակի ծնողները:

13. Մինչև ծրագրի շահառուի կարգավիճակի ձեռքբերումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին արտամարմնային բեղմնավորման փորձեր կատարած անձանց՝ ծրագրի շահառուի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում

փոխհատուցվում են միայն արտամարմնային բեղմնավորման երկրորդ փորձի ծավալները՝ համաձայն սույն հավելվածի 3-րդ կետի դրույթների:

3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՈՒ ԲՈՒԺՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Անպտղության պատճառագիտության հետազոտման, բուժման, օժանդակ սերմնավորման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կապակցությամբ շահառուն իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի հետ համապատասխան տեսակի ծառայությունների մատուցման պայմանագիր ունեցող բժշկական կազմակերպությունում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն)՝ իր ընտրությամբ:

15. Բժշկական կազմակերպությունը բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայությունները մատուցում է ըստ դիմումների էլեկտրոնային գրանցման հաջորդականության՝ սույն հավելվածի 4-րդ գլխով սահմանված շահառուների հերթագրման կարգին համապատասխան:

16. Օժանդակ սերմնավորման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման բժշկական օգնության և սպասարկման բժշկական ցուցումների, հակացուցումների, սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված ծավալներին համապատասխան՝ պացիենտին անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդի (մեթոդների) որոշման, ինչպես նաև սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերի պահանջներին համապատասխանության հարցը քննարկելու և որոշում կայացնելու նպատակով բժշկական կազմակերպությունում ստեղծվում է հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

17. Հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից (բժշկական կազմակերպության տնօրեն կամ տնօրենի տեղակալ, վերարտադրողական ծառայության ղեկավար, անպտղության պատճառագիտությամբ զբաղվող երկու մասնագետներ (մանկաբարձ-գինեկոլոգ, վերարտադրողաբան, սաղմնաբան, ուրոլոգ կամ անդրոլոգ), մասնագիտական ասոցիացիայի ներկայացուցիչ):

18. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով:

19. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Առաջին նիստի ընթացքում հանձնաժողովի անդամներից ընտրվում են հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի անդամներից մեկը:

20. Հանձնաժողովը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար կարող է տալ՝

1) դրական եզրակացություն՝ բժշկական օգնության և սպասարկման ծավալների և տեսակների նշումով.

2) բացասական եզրակացություն՝ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման մերժման հիմքերի նշումով:

21. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են և համարակալվում: Արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

22. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ դիմումների մուտքագրման փաստի՝ 10-օրյա ժամկետում, անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախ:

23. Հանձնաժողովը նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին նախապես ծանուցում է անպտղության պատճառագիտության հետազոտման, բուժման, օժանդակ սերմնավորման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կապակցությամբ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով դիմած քաղաքացուն (այսուհետ՝ դիմումատու):

24. Դիմումատուն բժշկական կազմակերպություն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ սույն հավելվածի N 1 ձևին համապատասխան, իսկ սույն հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ N 5 ձևին.

2) դիմումատուի անձնագիր, նույնականացման քարտ.

3) սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված պահանջներին համապատասխան՝ դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթեր.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (ճանաչված) ամուսնության մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթուղթը՝ սույն

հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված շահառուների դեպքում, իսկ սույն հավելվածով սահմանված այլ շահառուների դեպքում՝ միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (ճանաչված) ամուսնության մեջ գտնվելու դեպքում:

5) էպիկրիզ (բժշկական փաստաթղթեր) նախկինում կիրառված հետազոտման մեթոդների ու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին՝ տրված պացիենտի բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացրած բժշկական կազմակերպության կամ տարածքային սպասարկման կանանց կոնսուլտացիայի կողմից (եթե կինը մինչև դիմելը հետազոտվել և (կամ) անպտղության կապակցությամբ ստացել է բժշկական օգնություն և սպասարկում): Առաջնակի հետազոտվող անպտուղ զույգերի և սույն հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում բժշկական փաստաթղթեր չեն ներկայացվում:

25. Դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային առողջապահական համակարգ՝ սույն հավելվածի 24-րդ կետով նախատեսված դիմումին կից ներկայացվող բոլոր փաստաթղթերի ներկայացման դեպքում: Նախատեսված փաստաթղթերի թերի լինելու դեպքում դիմումատուն դիմումի մեջ իր կողմից նշված եղանակով պատշաճ տեղեկացվում է և նրան առաջարկվում է ներկայացնել բացակայող փաստաթղթերը կամ շտկել թերությունները:

26. Հանձնաժողովը շահառուի դիմումը և կից փաստաթղթերն ուսումնասիրում և քննարկում է նիստում մինչև 10 աշխատանքային օրվա, իսկ լրացուցիչ ուսումնասիրության կարիքի դեպքում՝ մինչև 20 օրացուցային օրվա ընթացքում:

27. Շահառուն իր ցանկությամբ կարող է մասնակցել իր դեպքի հանձնաժողովային քննարկման արդյունքների ամփոփմանը:

28. Հանձնաժողովի կողմից դիմումատուի գործն ուսումնասիրելու արդյունքում տրվում է եզրակացություն՝ սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան, իսկ սույն հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ N 6 ձևին: Հանձնաժողովի կողմից դիմումը բավարարելու դեպքում դրական եզրակացության մեջ նշվում են շահառուին ցուցված բժշկական ծառայությունների ծավալը և տեսակները:

29. Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա տրվում է ուղեգիր, որին կցվում է եզրակացությունը: Ուղեգիրն ուժի մեջ է տրման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում:

30. Սույն հավելվածի 11-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ ենթակետերով և 12-րդ կետով սահմանված դեպքերում ուղեգիրը՝ սույն հավելվածի N 3 ձևին համապատասխան, իսկ սույն հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում՝ N 7 ձևին, տրամադրում է բժշկական կազմակերպության հանձնաժողովը:

31. Դիմումը կարող է մերժվել հետևյալ դեպքերում՝

1) դիմումատուն չի բավարարում սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված շահառուին ներկայացվող պահանջներին.

2) առկա են Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշման N 2 հավելվածի 6-րդ և 13-րդ կետերով սահմանված օժանդակ սերմնավորման և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հակացուցումներ.

3) սեփական ձվաբջջով արտամարմնային բեղմնավորման կամ սեփական արգանդում սաղմի ներդրման նպատակահարմարության բացակայություն, որի մասնագիտական եզրակացության համար կարող է հիմք հանդիսանալ մեթոդի կիրառման արդյունքում սպասվող դրական ելքի խիստ ցածր մակարդակը, առաջացնելով դոնորական ձվաբջջի կամ փոխնակ մոր ծառայությունների կիրառման անհրաժեշտություն: Վերջինիս բժշկական պատճառների ցանկը ներառում է՝

ա. հակամյուլերային հորմոնի 1 նգ/մլ-ից ցածր մակարդակը, ընդ որում սույն որոշման 12-րդ կետով սահմանված շահառուների խմբի համար հակամյուլերային հորմոնի ստորին սահման է համարվում մինչև 40 տարեկանը՝ 0,6 նգ/մլ, 40-43 տարեկանում՝ 1 նգ/մլ, 44 տարեկան և ավելի տարիքի դեպքում բեղմնավորումը կատարվում է դոնորական ձվաբջջով: Սույն պարբերությունից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ շահառուն ունի նախկինում կրիոկոնսերվացված ձվաբջիջներ՝ յուրաքանչյուր արտամարմնային բեղմնավորման փորձի համար՝ առնվազն 5 ձվաբջիջ, և այս դեպքում անկախ հակամյուլերային հորմոնի ցուցանիշից՝ շահառուի վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունն ու սպասարկումը շարունակվում է ձվաբջիջների բեղմնավորման փուլից՝ ներառելով մինչ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշմամբ սահմանված ծավալներով,

բ. երկու ձվարաններում անտրալ ֆոլիկուլների 5-ից պակաս քանակը (բացառությամբ այն դեպքերի, երբ շահառուն ունի նախկինում կրիոկոնսերվացված ձվաբջիջներ՝ յուրաքանչյուր արտամարմնային բեղմնավորման փորձի համար՝ առնվազն 5 ձվաբջիջ, և այս դեպքում վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունն ու սպասարկումը շարունակվում է ձվաբջիջների բեղմնավորման փուլից՝ ներառելով մինչ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշմամբ սահմանված ծավալներով),

գ. արտամարմնային բեղմնավորման 3 և ավելի անհաջող փորձը,

դ. արգանդի ախտաբանություններ՝ բարակ՝ 5 մմ-ից պակաս էնդոմետրիում, հիպոպլազիա՝ 3-4-րդ աստիճանի, արգանդի զարգացման արատներ:

32. Դիմումի մերժման դեպքում դիմումատուն չի զրկվում կրկին դիմելու իրավունքից (մերժման հիմքերի վերացման դեպքում):

33. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում օժանդակ սերմնավորման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ստացված արդյունքների մասին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացնում ամսական, տարեկան հաշվետվություն՝ սույն հավելվածի N 4 ձևին համապատասխան:

**4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ,
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԵՐԹԱԳՐՈՒՄԸ**

34. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում օժանդակ սերմնավորման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման նպատակով բժշկական կազմակերպությունների կողմից շահառուների դիմումները մուտքագրվում են, և շահառուները հերթագրվում են:

35. Օժանդակ սերմնավորման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների դիմումների մուտքագրումը և հերթագրումն իրականացվում է այն բժշկական կազմակերպության կողմից, որին դիմել է շահառուն՝ ըստ դիմելիության ժամկետի, կենտրոնացված ընթացակարգով, էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով:

36. Պացիենտի հերթագրման գործընթացում բժշկական կազմակերպությունը պացիենտին ապահովում է ծրագրի շրջանակներում դեպքի վարման վերաբերյալ անվճար խորհրդատվությամբ:

37. Բժշկական կազմակերպությունում պացիենտի բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վարվում է էլեկտրոնային գրանցամատյան՝ համաձայն N 8 ձևի:

38. Բոլոր այն դեպքերում, երբ հերթագրված շահառուի պատճառագիտության հետազոտությունների արդյունքում հայտնաբերվում և եզրակացության մեջ պատճառաբանված հիմնավորմամբ նշվում են օժանդակ սերմնավորման կամ արտամարմնային բեղմնավորման կիրառման անմիջական ցուցումներ, ապա տվյալ շահառուն սպասարկվում է առաջնահերթ: Նշվածի վերաբերյալ որոշումը կայացվում է հանձնաժողովի կողմից, ըստ անհրաժեշտության, այլ մասնագետների ներգրավմամբ, ինչի վերաբերյալ կատարվում է գրառում պացիենտի վարման անհատական քարտում:

39. Հաշվառման և բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացում ապահովվում է հերթագրման շարունակականության սկզբունքը, համաձայն որի, կնոջ տարիքը որպես շահառու կամրագրվի դիմելու պահին և նա կմնա շահառու անգամ բյուջետային տարվա փոփոխման դեպքում:

40. Հերթագրված շահառուներն իրենց բժշկական օգնության և սպասարկման ժամկետի մասին շահառուի (ամուսնական զույգի) ընտրությամբ տեղեկացվում են՝ գրավոր, հեռախոսով կամ դիմումում նշված ծանուցման եղանակով:

41. Բժշկական կազմակերպությունը բնակչությանն ապահովում է ծրագրի շահառուների դիմումների մուտքագրման և հերթագրման՝ սույն գլխի, հանձնաժողովի կազմի, գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ այն փակցնելով բժշկական կազմակերպության ընդունարանում՝ տեսանելի տեղում:

Գ Ի Մ ՈՒ Մ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԿՆՈՋ/ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ

_____ -ԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝

ԿԻՆԸ

(անունը, ազգանունը, հայրանունը)

ԱՄՈՒՍԻՆԸ

(անունը, ազգանունը, հայրանունը)

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ/ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԸ

(քաղաքը/մարզը, գյուղը, փողոցը, տունը/շենքը, բնակարանը)

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ (ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ՔԱՐՏ) ՀԱՄԱՐԸ, ՍԵՐԻԱՆ _____

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ _____

Անպտղության կապակցությամբ խնդրում եմ (ենք) դիտարկել սույն դիմումը և տրամադրել բժշկական օգնության և սպասարկման ստորև ներկայացված տեսակը (տեսակները)՝ ընդգծել/նշել)

1) անպտղության պատճառագիտության հետազոտում ու բուժում.

2) մինչ օժանդակ սերմնավորումը/արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ, օժանդակ սերմնավորում, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում ընդգծել/նշել:

(Նշումներ կատարվում են, եթե անպտղոլ կինը կամ զույգը նախապես հետազոտված է և առկա է վերարտադրողաբանի մասնագիտական եզրակացությունը՝ ցուցված մեթոդի վերաբերյալ/կցվում է դիմումին):

Հայտարարում ենք, որ վերհուշությունում (անամնեզում) չենք ունեցել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների՝ արտամարմնային բեղմնավորման 3 և ավելի փորձ:

Խնդրում եմ (ենք) իմ (մեր) բուժօգնության կազմակերպման ժամկետների և հանձնաժողովի նիստի անցկացման վայրի ու ժամանակի մասին ինձ (մեզ) ծանուցել կապի հետևյալ միջոցով -----

Տեղեկացված եմ (ենք), որ՝

Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների, օժանդակ սերմնավորման կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը չեն ներառում փոխնակ մոր, դոնորական ձվաբջջի և դոնորական սերմնաբջիջների համար դոնորի (դոնորների) ծառայությունների փոխհատուցումը:

ԴԻՄՈՂՆԵՐ

(կնոջ անունը, ազգանունը, հայրանունը/ստորագրությունը)

(ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը/ստորագրությունը)

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ԴԵՊԶԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ՊԱՅԻԵՆՏԻՆ
(ՊԱՅԻԵՆՏՆԵՐԻՆ) ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ,
ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ,
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՄԵԹՈԴՆԵՐԻ/ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

(բժշկական կազմակերպության անվանումը)

1. Հանձնաժողովը, մասնակցությամբ հետևյալ մասնագետների (անունները, ազգանունները, հայրանունները)

1)

2)

3)

4)

5)

2. Ուսումնասիրելով և քննարկելով շահառու (շահառուներ)՝

-ի

և

դիմումը և կից ներկայացված բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև առկա հետազոտությունների արդյունքները, հանգեց հետևյալ եզրակացության՝

Պացիենտի (ամուսնական զույգի) մոտ ախտորոշվում է

3. Պացիենտի (ամուսնական զույգի) հետագա վարումը՝

1) հիմնավորված է և ցուցված են բժշկական օգնության և սպասարկման հետևյալ ծավալները՝

☐ անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում

☐ մինչ օժանդակ սերմնավորումը կամ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ (նշել/ընդգծել)

☐ օժանդակ սերմնավորում՝ ամուսնու սերմով

☐ օժանդակ սերմնավորում՝ դոնորական սերմով (դոնորին փոխհատուցումը՝ շահառուի կողմից)

☐ արտամարմնային բեղմնավորման մեկ փորձի կիրառում՝ սեփական ձվաբջջով

☐ արտամարմնային բեղմնավորման մեկ փորձի կիրառում՝ դոնորական ձվաբջջով (դոնորի փոխհատուցումը՝ շահառուի կողմից)

☐ արտամարմնային բեղմնավորման 2-րդ փորձի կիրառում՝ սահմանված պայմաններով

☐ հավելյալ ստացված սաղմի (սաղմերի) տեղադրում արգանդի խոռոչ.

2) մերժվում է, հետևյալ հիմնավորմամբ՝

ա. առկա է հակացուցում _____

բ. կիրառվելիք մեթոդի արդյունքում սպասվող դրական ելքի խիստ ցածր մակարդակ (նշել պատճառը/պատճառները).

գ. այլ հիմքեր

3) այլ նշումներ

4. Ես (մենք)՝ շահառու (շահառուներս) ծանոթացել եմ (ենք) հանձնաժողովի եզրակացության հետ, տեղեկացված եմ (ենք) օժանդակ սերմնավորման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդների արդյունավետության և հնարավոր ելքերի մասին, որի համար ստորագրում եմք (լրացվում է դեպքի ուսումնասիրության արդյունքների ամփոփմանը շահառուի մասնակցության դեպքում)։

Կինը _____,

Ամուսինը _____

5. Նիստին մասնակից հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները, հայրանունները և ստորագրությունները՝

1)

2)

3)

4)

5)

_____ 20 թ.

ՈՒՂԵԳԻՐ N.....

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ, ՄԻՆՉ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻՆՉ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՕԺԱՆԴԱԿ
ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ**

(տրվում է բժշկական կազմակերպության հանձնաժողովի եզրակացության հիման վրա (եզրակացությունը կցվում է ուղեգրին) և ուժի մեջ է տալու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում)

(բժշկական կազմակերպության անվանումը)

(բժշկական կազմակերպության տնօրենի անունը, հայրանունը, ազգանունը)

Ուղեգրվում է (են՝)

քաղաքացի

(շահառուի (շահառուների) անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը)

(բնակության/հաշվառման հասցեն)

Անպտղության կապակցությամբ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում (ընդգծել/նշել) բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հետևյալ ծավալի/տեսակի ծառայություններ ստանալու համար (անհրաժեշտ ծավալը/տեսակը (տեսակները) ընդգծել/նշել)՝

- 1) անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում.
- 2) մինչ օժանդակ սերմնավորումը կամ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ (նշել/ընդգծել).
- 3) օժանդակ սերմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով (նշել/ ընդգծել).
- 4) վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառում՝ արտամարմնային բեղմնավորման մեթոդով կնոջ կամ դոնորական ձվաբջջով (նշել/ընդգծել).
- 5) հավելյալ սաղմի (սաղմերի) տեղադրում արգանդի խոռոչ.
- 6) արտամարմնային բեղմնավորման 2-րդ փորձի կիրառում՝ սահմանված պայմաններով:

Հանձնաժողովի նախագահ

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____ 20 թ.

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ,
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

_____ 20 թ.- _____ 20 թ.

Բժշկական օգնության և սպասարկման տեսակը	ՀՀ	ՀՀ	ՀՀ	ՀՀ	ՀՀ
	կառավարության 2015 թ. N 568-Ն որոշման հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված	կառավարության 2015 թ. N 568-Ն որոշման հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված	կառավարության 2015 թ. N 568-Ն որոշման հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված	կառավարության 2015 թ. N 568-Ն որոշման հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված	կառավարության 2015 թ. N 568-Ն որոշման հավելվածի 12-րդ կետով սահմանված
Անպտղության պատճա- ռագիտության հետազո- տություն ու բուժում					
Շահառուներ					
Հղիություն					
Ծննդաբերություն/երեխա					
Օժանդակ սերմնավորում					
Շահառուներ					
Հղիություն					
Ծննդաբերություն/երեխա					
Արտամարմնային բեղմնավորում					

Շահառուներ					
Հղիություն					
Ծննդաբերություն/երեխա					

(ստորագրությունը)

Բժշկական կազմակերպության տնօրեն՝

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

Դ Ի Մ ՈՒ Մ

ԲՆԱԿԱԶՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԻՆՉ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ,
ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ _____-ԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

(անունը, ազգանունը, հայրանունը)

Բնակության վայրը/ հաշվառման վայրը

(քաղաքը/մարզը, գյուղը, փողոցը, տունը/շենքը, բնակարանը)

Անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր կամ նույնականացման քարտ)
համարը, սերիան _____

Հեռախոսահամարը _____

Խնդրում եմ դիտարկել սույն դիմումը և տրամադրել բժշկական օգնության և
սպասարկման ստորև ներկայացված տեսակը (տեսակները)՝ ընդգծել/նշել)

1) մինչ օժանդակ սերմնավորումը իրականացվող պարտադիր հետազոտություններ, օժանդակ սերմնավորում (ընդգծել/նշել):

Խնդրում եմ իմ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ժամկետների և հանձնաժողովի նիստի անցկացման վայրի ու ժամանակի մասին ինձ ծանուցել կապի հետևյալ միջոցով _____

ԴԻՄՈՂ՝

(անունը, ազգանունը, հայրանունը/ստորագրությունը)

_____ 20 թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՊԱՑԻԵՆՏԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ, ՄԻՆՉ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

(բժշկական կազմակերպության անվանումը)

1. Հանձնաժողովը, մասնակցությամբ հետևյալ մասնագետների (անունները, ազգանունները, հայրանունները)

1)

2)

3)

4)

5)

2. Ուսումնասիրելով և քննարկելով շահառու՝

_____ -ի
և _____

դիմումը

և կից ներկայացված բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև առկա հետազոտությունների արդյունքները, հանգեց հետևյալ եզրակացության՝

1) պացիենտի հետագա վարումը՝

- ☐ մինչ օժանդակ սերմնավորումը իրականացվող պարտադիր հետազոտություններ
- ☐ օժանդակ սերմնավորում

2) մերժվում է, հետևյալ հիմնավորմամբ՝

ա. առկա է հակացուցում

բ. կիրառվելիք մեթոդի արդյունքում սպասվող դրական ելքի խիստ ցածր մակարդակ (նշել պատճառը/պատճառները).

գ. այլ հիմքեր

3) այլ նշումներ

3. Ես՝ շահառուս, ծանոթացել եմ հանձնաժողովի եզրակացության հետ, տեղեկացված եմ օժանդակ սերմնավորման արդյունավետության և հնարավոր ելքերի մասին, որի համար ստորագրում եմ (լրացվում է դեպքի ուսումնասիրության արդյունքների ամփոփմանը շահառուի մասնակցության դեպքում).

Շահառու _____

4. Նիստին մասնակից հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները, հայրանունները և ստորագրությունները՝

1)

2)

3)

4)

5)

ՈՒՂԵԳԻՐ N

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՄԻՆՉ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ**

(տրվում է բժշկական կազմակերպության հանձնաժողովի եզրակացության հիման վրա (եզրակացությունը կցվում է ուղեգրին)
և ուժի մեջ է տալու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում)

(բժշկական կազմակերպության անվանումը)

(բժշկական կազմակերպության տնօրենի անունը, հայրանունը, ազգանունը)

Ուղեգրվում է՝
քաղաքացի

(շահառուի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը)

(բնակության/հաշվառման հասցեն)

Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում (ընդգծել/նշել) բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հետևյալ ծավալի/տեսակի ծառայություններ ստանալու համար (անհրաժեշտ ծավալը/տեսակը (տեսակները) ընդգծել/նշել)՝

1) մինչ օժանդակ սերմնավորումը իրականացվող պարտադիր հետազոտություններ (նշել/ընդգծել).

2) օժանդակ սերմնավորման մեթոդով ամուսնու կամ դոնորական սերմով (նշել/ընդգծել).

Հանձնաժողովի նախագահ՝

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____ 20 թ.

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ*

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ,
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**

Դիմելու օրը, ամիսը, տարեթիվը	Կնոջ անունը, ազգանունը, հայրանունը	Ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը (ՀՀ օրենս- դրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնու- թյան մեջ գտնվելու դեպքում)	Բնակու- թյան վայրը (մարզ, գյուղ/ քաղաք, շենք, բն./տուն)	Գրանց- ման վայրը (մարզ, գյուղ/ քաղաք, շենք, բն./տուն)	Շահառուի ներկա- յացրած փաստա- թղթերի համապա- նությունը սահման- ված հիմնական լրացուցիչ պահանջ- ներին (թվարկել հիմքերը)	Դիմումը մերժվել է (նշել պատճառը)	Տրվել է ուղեգիր (նշել համարը)	Անպտղության հետազոտման և բուժման, մինչ օժանդակ սերմնավորումն ու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը իրականացվող հետազոտությունների, օժանդակ սերմնավորման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին						Հղիացել է այո/ոչ	Ծննդա- բերել է (նշել կենդա- նածին է այո/ոչ)
								անպտղու- թյան պատճա- ռագիտու- թյան հետազո- տում և բուժում	մինչ օժան- դակ սերմ- նավո- րումն իրակա- նացվող հետա- զոտու- թյուններ	մինչ վերար- տադրո- ղական օժան- դակ տեխնո- լոգիա- ների կիրա- ռումն իրակա- նացվող հետա- զոտու- թյուններ	օժան- դակ սերմ- նավո- րում	արտա- մարմ- նային բեղմնա- վորման փորձ	հավել- յալ ստաց- ված և սառեց- րած սաղմի տեղա- դրում		

* Նախատեսված է բժշկական կազմակերպության կողմից դեպքերի գրանցման, հաշվառման և վարման արդյունքում ստացված տվյալների արձանագրման համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան